



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

18408

146

891.99

S-41

542-3

41

146

ԾՆՈՂԱՍԷՐ ԹԵԿՂԻՆ

Ե Ի

ԻՐ ԲԱՐԻ ԳՈՐԾՔԵՐՆ

ԵՐԿՈՒ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ

Հատոր II.

ԱՇԽԱՏԱՌԻՐՈՒԹԻՒՆ

Խ. ՏԷՐ ԽԱԶԱՏՐԵԱՆՑԻ

ԱՇՏԱՐԱԿԵՑԻՈՑ

2003

891.99

S-41

Թ Ի Յ Լ Ի Զ

Պանի Յովհաննիսի Մարտիրոսանց:

1878

891.99

8-341 4.

ԾՆՈՂԱՍԷՐ ԹԵԿՂԻՆ

Ե՛Ի

ԻՐ ԲԱՐԻ ԳՈՐԾՔԵՐՆ

ԵՐԿՈՒ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ

Կարո II.

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Խ. ՏԷՐ ԽԱԶԱՏՐԵԱՆՑԻ

ԱՇՏԱՐԱԿԵՑԻՑ

ԹԻՖԼԻՉ

Ի տպարանի Յովհաննիսի Մարտիրոսեանց:

1878



1008
32073
3969

4234

ՏԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆՍՏԱԿՆԵՐԸ

ՏԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆՍՏԱԿՆԵՐԸ

ՏԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆՍՏԱԿՆԵՐԸ

Дозволено цензурою. Тифлисъ, 25 Марта, 1877 года.

ՏԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆՍՏԱԿՆԵՐԸ

ՏԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆՍՏԱԿՆԵՐԸ

ՏԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆՍՏԱԿՆԵՐԸ

ՏԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆՍՏԱԿՆԵՐԸ

Типография Мартиросяна, на Орбелиановской улицѣ, д. №. 5.

8781



ՄԵԾԱՐՈՅ ԲԱՐԵԿԱՄ.

Պ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅԱԿՈԲԵԱՆ
ՍՏԵՓԱՆՆՈՍԵԱՆՑ:

«Ծնողասէր Քեկղեի» I հատորում յառաջ բերած բարենպաստակ գործքերը մտաչելի կլինին արդեօք Հայկաստանը զաւակներից մատղահաս դազափարին, և թէ որչափ յուսալի է նորա գործնական անունն համակրելոյ, դա ժամանակն ինքը թող որոշէ:

Բայց՝ այժմ «Քեկղեի» պատմական անցքերի դեռ II հատորն իր նիւթական քաղցր պտուղներովն դիմում է ազնիւ բարեկամից ընդարձակ գրկումն հանգրստեան տեղի որոնելոյ, և զթաշարժ մասունքներովն սրտից երբեմն տխուր հետեւանքներն փարատելոյ:

Քո մտերիմ բարեկամ՝
Խ. Տէր Խաչատրեանց.

20-ն Փետրվարի
1877 ամի.
Ն ո ր - Բ ա յ ա զ ի տ :

ՄԱՐԿՈՍ ԵՎԱՆԳԵԼԻՍ

ՄԱՐԿՈՍ ԵՎԱՆԳԵԼԻՍ
ՄԱՐԿՈՍ ԵՎԱՆԳԵԼԻՍ

... և զայն ասաց զի աստուծոյ զայն
... աստուծոյ զայն աստուծոյ զայն
... աստուծոյ զայն աստուծոյ զայն
... աստուծոյ զայն աստուծոյ զայն
... աստուծոյ զայն աստուծոյ զայն
... աստուծոյ զայն աստուծոյ զայն
... աստուծոյ զայն աստուծոյ զայն
... աստուծոյ զայն աստուծոյ զայն

ՄԱՐԿՈՍ ԵՎԱՆԳԵԼԻՍ
ՄԱՐԿՈՍ ԵՎԱՆԳԵԼԻՍ

ՄԱՐԿՈՍ ԵՎԱՆԳԵԼԻՍ
ՄԱՐԿՈՍ ԵՎԱՆԳԵԼԻՍ

Թ Ե Կ Ղ Ի

ԲԱԺԱՆՈՒՄՆ ԵՐՐՈՐԴ

Յերեկեան երիտասարդ ժամերն էին, զարնա-
նաբեր հողմը փչում էր հողազնդի հարաւային կող-
միցն, երկրի ալեոր սպիտակութիւնը անդ անդ ան-
հետացել էր արդէն, մուգ կապուտ ձնծաղիկներն
զարնան ողջունաբեր հրաւերներ էին կարգում ան-
զարդ երկրին, երբ Թեկղին իր տխուր քնիցն դեռ
նոր արթնացած՝ մահաց բաժանուած՝ սիրուն աչքերն
իր անձուկ յաւիտենական անակի վերայ սկեռած՝
կանգնել էր Վայսերական ամբոխի դէմ անմուռնչ, և
դեռ սպասում էր իր վերջին խօսքերի վճռողական
պատասխանին:

Ամբոխն, որ ժամ յառաջ Թեկղիի մահուան
տխուր սուզը բերան առած՝ ողբալի ձայնով կսկծո-
ղական զովասանքներ կկարդար, նոյնպէս և հոգեոր
դասն նորա անզգայ զազաղի վերայ թաղման կարգն
կկատարէր, այդ միջոցին խորին լուսթիւն թագա-
ւորել էր զորանց վերայ, որոնց մտքերն կարծես բնա-

կան դադափարներին բարձուել էին իսպառ, երկիւղի սարսափն և սրտերի ուրախութիւնն մէկ մէկուհեա միաւորուած՝ ձգել էր հանդիսականներին անըզգայութեան տակ, և երբեմն Ասզարոսի յարութիւնն կը մտաբերէին այդ օրն:

Ահհրամն՝ երբ իր խնամախօս աչքերովն կնայէր թեկղիի դեռ նոր մահից բաժանուած գունատ երեսին՝ արդարև նորա արտաքին տեսքն նմանացնում էր իսկապէս յաւերժահարսի, նորա համեստ խօսակցութեան կապերն նոյն վայրկենումն գրաւեցին Ահհրամի սիրտն, կուզէր նա գրկել թեկղիին և նորա վրձնողական պատասխանն ստանալ, բայց ցաւում էր, որ այդպիսի մի իրաւունքի լուծումն կախումն ունի միմիայն Արքայի կամքիցն, որ բոլորովն շուարած այդ դեռ առաջին անգամ տեսած հրաշագործութեան վերայ՝ թեկղիին մի գրկումն և Սրաբիոնին միւս գրկումն սեղմած՝ փարում էր նորանց, միմիայն սրտի զգացմունքով, առանց մի որևիցէ բերանաշարժ խօսակցութեան:

Հեղում Հայկունին և նորա կիսակենդան կինն թող առած իրանց անուշ դատերն՝ Սրաբիոնի փրկչական մասունքներն էին համբուրում, Նախախնամութեան վեհ անունն էին օրհնարանում, իսկ Սրաբիոնն, Բրաբիոնն և Արքայի սենեքերիմ ժառանգն՝ հայեացքներն ձգած թեկղիի սիրուն աչքերին՝ նորա բարեհաճ կամքին էին սպասում, բայց թեկղին դեռ իր խնդրանացն համեմատ չստանալով մի որևիցէ իրա-

ւունք: չէր վստահանում այդ երեք սիրոյ գերիների խնդիրն կամ մերժել՝ կամ կատարել, մինչդեռ նորա չորրորդ փեսայացուն թեքերն յետ աարած՝ սպասում էր թեկղիի դիակն գրկելոյ իր անձուկ ծոցումն, և նորա հետը յաւիտենական քնով կուսական հարսնութիւն վայելելոյ, թող թէ նորա նազելն Նիզայն, որ թեկղիի խօսքերից գրաւուած, վերջին նպատակի վերայ էր մտածում միայն:

Օրն տարածում էր, արեգակն պատրաստուում էր անհետանալ և իր ցողուն շառաւիղներն ծածկել հորիզոնի տակն, երբ տխուր գերեզմանից բաժանուած թեկղիի չորս կողմն պատած՝ սիրոյ զգուանքով և ծափահարական հանդիսով, դարձան Արքունի պալատն: Այն սեղանն, որ պատրաստել էին Արքունի ընդարձակ դահլիճումն հանդիսականաց համար, որպէս զև թեկղիի թաղման ճաշն վայելեն, նորա հոգոյ հանգիստն կատարեն՝ այժմ սեղանակիցներն թեկղիի հետն միասին ձոխ սեղանի վերայ բազմած՝ թեկղիի կենդանութեան բաժակներն էին դատարկում, նորա կենաց աւելումն էին խնդրում չեղում Հայկունուն, որ պէտք է ասէին տխուր ձայնով լսատուած քեզ միսիթարիս, ներդաշնակ նուագարաններն հրճուանաց ձայնն էին հնչում նորա սրտին, նորա ժամ յառաջ թարշամած աչքերն էին զօրանում, իսկ նորա վերջին թելը կտրուած սղաւոր մայրը՝ հրեշտակական աւետիքներով՝ մարմնական ուժն էր զօրապնդում:

Քանի մի օրից յետ՝ Քեկղին հրաւիրական թերթով մտնո գործեց դատաստանատուն, իրան վերաբերեալ վճիռն լսելոյ, ուրանօր ներկայ էին Բրաբիոնն, Սրաբիոնն, Ժառանգն և առհասարակ բոլոր պալատականներն, նախանդամ ծերակուտերն՝ նախագահ Կայսրի ներկայութեամբ: Նորա Քեկղին խնդիրն դատողութեան տակ ձգելուց յետոյ՝ կարդացին նորա դէմ հետեւեալ օրագրական թերթն. «Քեկղին իր վերջին հրաժարականն կարդալուց յետոյ՝ արդարեւ մահուան դրօշակի տակ կնքուած՝ երեկ ամփոփուելու էր իր համար պատրաստուած անձուկ զերեզմանի ծոցումն, ա՛նքն արդէն զրկուած էին համարում իրանց նորա մասնակցութիւնիցն, բայց որովհետեւ դորա վերատին կենդանութեան հետեւանքաներն պարզ ցոյց են աալիս մի աներեւոյթ գաղտնիք, պատմորոյ Արդարատա Սերակոյան վճռում է. Քեկղին թողուլ այսուհետեւ ազատ և բոլորովին ինքնիշխան, առանց ննթարիելոյ մի որեւիցէ հպատակութեան:» Քեկղին ստանալով իր բաւականութիւնն, իւր ցանկութեան համեմատ՝ ստացաւ վճռի պատճէնն և ճնողաց ձեռքից բռնած՝ սրտի ուրախութիւնով դարձաւ իր նախկին կացարանն:

Քեկղին մահուան գոյժն պանդոկապետին յիշեցնում էր նորա ճնողաց ներկայ անմխիթար դառն վեճակն, Լիզայն՝ որի բուն նպատակը Քեկղին էր միայն, անէճք էր կարդում իր անբաղդութեան վերայ, ամէնքը դառն կսկիծներով հառաչում էին Քեկ-

ղի նման՝ զեռ ծաղիկ հասակումն մի համետ օրիորդի մահուան համար, ուստի շտապեցին գալ Հեղոմ Հայկունու որդիազուրկ սիրան մխիթարելոյ: Երբ նորա հասան մտադրեալ քաղաքն՝ Հեղոմի տան նուազարանաց քաղցր լարերի հնչեւներն միանգամայն զարմայրին նրանցը. նախասենեակը մրտնելուն պէս՝ բազմականների միջին Քեկղին կենդանի էին տեսնում, նմանապէս և Հեղոմին չափազանց ուրախ: Համարեա երազ էին կարծում տեսածներն:

Քեկղին, որ արդէն զիտէր նրանց գալուստը, վազեց յառաջ, գրկեց իր բարերար պանդոկապետին և նազելի Լիզային, և ապա հրաւիրեց դահլիճն, ուր սեղանի վերայ բազմած էր այդ օրը քաղաքի բարձր դասը: Նոյնպէս Բրաբիոնն և Սրաբիոնն, որոնք ծանօթ էին պանդոկապետին՝ զեռ Ամբրիկաումն, մի քանի տարի յառաջ, Հեղոմն և նորա կինն, պանդոկապետին գրկած՝ օրհնում էին անսահման Բարձրելոյ վեհ անունն, որ խղճալով այւոր Հեղոմի բանդումն կրած տառապանքներին՝ առաջնորդեց Սրաբիոնին Քեկղին փրկիչ: Արդարեւ սա արթնացրեց Քեկղին յաւիտենական մահուան քնիցն, երբ նորա ցամաքած մարմինն գերեզման կուղէին իջեցնել, վազեց միւս կողմիցն և Բրաբիոնն և նորա յետեանց Քեկղին ձեռքով ազատուած տասն գերիներն, որոնք զեռ Վահրամի հետն եկել էին ընտանեօք Քեկղին ծառայելու: Ինչպէս թաղաւոր օձն, գիշերային թանձր մթին մէջ իր մարմնոյ վերջին մի մասն պտոյտ

տալով կ'կազմէ մի շքեղուն վահանաձև գործիք, և նորա միջին կէտիցն գլուխն դուրս հանած՝ կ'արտահոսէ դէպի վեր իր բերանի լուսաձև հունը, և կրկին կ'ընդունի յետ, այնպէս և Սրաբիոնի չորս կողմն բռնած, բարձրացնում էին դէպի վեր, և ապա փափուկ ձեռքերի վերայ ընդունելով՝ կրկին իջեցնում էին թաւիշեայ բազմոցի վերայ և փրկիչ անուն էին տալիս նորան: Եւ թեկզին՝ իր մոմային բարակ բազուկն Լիզայի կիսալաւջովն տարածած՝ հաղորդում էր նորան ամէն մի անցկացած դէպքերն, ցոյց տալով նորան և երկու միանման մարմնաւոր հրեշտակներին, որոնք հանդիսականաց ուրախութեան գլխաւոր պատճառն էին այդ նշանաւոր օրն: Ամէնքը զգում են արդէն, որ թեկզին կ'առանդի միմիայն նորա ազատող Սրաբիոնն, այդ առթիւ՝ Արքայն ինքը թէև քանիցս անգամ ժառանգին կուզէր արդելել, որ թեկզի մօտն ստէպ չի մտնի, որպէս զև՝ նորա սիրովն աւելի չ'բորբոքուի, բայց ժառանգն... մի ժամ առանց թեկզին պատրաստ էր կենդանի գերեզման մտնելու. ինչպէս սպիտակ ձիւնն՝ արևուն տասպ խորշակիցն կսկսի հալել, և կազմել մի յորդահոս հեղեղ՝ այնպէս և նա՝ թեկզի տաք սիրովն հալում էր, նորա հոգին մարմնոյ հեռը մաքառում էր, և թեկզի եռանդուն սիրովն բորբոքուած՝ երևում էր շատերին բնականիցն դուրս: Արքայաժառանգ վեհութիւն՝ համարեայ ծածկել էր միանգամայն սիրոյ քօղն տակն, մտածում էր նա, եթէ թեկզին իր խնդիրն կմերժի

և կ'ընտրի մի այլ ամուսին, այն ժամանակն նա չի պէտք է ունենայ կենդանի կեանք, այլ պէտք է թեկզին համար պատրաստած գերեզմանն ինքը ժառանգի, և որովհետև Սրաբիոնի սէրն դէպի թեկզին աւելի գերազանց էր քան թէ ժառանգինը, այդ առթիւ՝ դեռ անհամբեր սպասում էին թեկզի քաղցր խօսակցութեան կապերին՝ այդ առարկային վերաբերելու:

Բրաբիոնն աչքերն առանց թարթելու՝ նայում էր անդադար Լիզայի երեսին, որոյ արտաքին ձևերը դարձեալ կ'համապատասխանէին թեկզի գեղեցկութեանը, նա զգում էր, որ թեկզին այդ երկու ուժեղների ձեռքիցն ազատուելու չէ, ուստի նա համոզուեցաւ իր սիրոյ նպատակն դարձնել դէպի Լիզայն: Արդարև կարճ միջոցում այս վերջինների սէրն թեկզի համոզանքներովն այնպէս միաւորութիւն ունեցաւ միմեանց հետ, որ Բրաբիոնն Լիզային գերազանցեց թեկզիցն աւելի: Բրաբիոնն՝ որ մինչև այս կէտն վառուած էր թեկզի վառ սիրովն, այժմ նա թեկզին համարեայ մոռացած՝ Լիզայի սիրոյ կրակովն է խարակվում, նորա քնքուշ երեսի զծագիրն է նկարագրում իր սրտի մէջն, և շտապում նորա հետ ժամ յառաջ ամուսնութեան լծոյ տակն մտնելոյ: Մինչդեռ հանդիսականներն շարունակում էին իրանց ամէնօրեայ ուրախ ժամերն՝ թեկզին յայտնեց բոլորին մի արժանաւար նպատակ, այն է Բրաբիոնի ամուսնութիւնը սիրուն Լիզայի հետը: Այս վերջիններն, որոնք

անհամբեր սպասում էին այդպիսի մի աւետեաց ձայնի՝
 իսկոյն և եթ յայտնեցին իրանց զոհոճակ սրտերի
 հաճութիւնները, ուստի և ծնողաց համաձայնու-
 թեամբն՝ այդ երկու սիրահարները նշանադրութեան
 հանդէսը և ամուսնութեան սրբազան կարգը կա-
 տարումն ստացան Հեղոմի իսկական կաց ըանուան մի
 օրում:

Թեկզին տեսնելով, որ Սրաբիոնի և Ժառանգի
 սէրն դէպի իրան այն աստիճանին է հասել, որ եթէ
 նորանց մէկին կարգաց իր բացասութեան՝ անկարծիք
 վերջինն անձնազոհ պէտք է լինի, ուստի նա բոլորի
 դէմ սկսեց իր կուսական սիրուն աչքերը փոքրիկ
 լծակի ձևացնել և իր սրտի զաղտնիքների կապերն
 բանալ, և ասել ճատ դարդ է, և ամէն մի թե-
 րամիան կհամոզուի, որ այս կեանքի բաղդաւորու-
 թեան հետը կապ ունի և անբազդութիւնը, հարըս-
 տութեան հետը ազգատութիւնը, թող թէ մարդն
 բունելով իր մէջ այս կեանքի բոլոր հարըստու-
 թիւնն և բազդաւորութիւնն դարձեալ նա եր-
 օջանիկ չի համարում, վասն զի այդ բոլորն ունայն
 զեն և անցաւոր, ուստի արհամարելով այդ ամէնն
 պիտոյ է հետեւել Յիսուսի քաղցր կամքին, բառնալ
 ձնորա սուրբ խաչն և կատարել նորա սուրբ պատ-
 ուիրաններն, որոնցով միայն կարող է մարդն եր-
 օջանիկների թուումն դասել իրանը, և վայելել ան-
 հաս էութեան անցանելի փառքն, որն իր ձեռա-
 գործ մարդիկների համար է միայն պատրաստել:

այսժամ՝ կնքելով իր ճակատի վերայ կուսական կեան-
 քըն՝ ես խորհուրդ կապի իմն սրտանց սիրելի Ժա-
 ռանդին և Սրաբիոնին, որ ընտրեն իրանց համար ու-
 րիշ ամուսիններ, ըստ որում խիղճն ինձ յանդիմա-
 ճում է այդ երկու միակշիւ սիրելիներից մէկին կամ
 ամբարն մերժել իմ սիրուցն և լինել պատճառ
 ձնոցա կորստեանը»

Թեկզի այդ տեսակ դիտաւորութիւնն, մասամբ
 անսխորժ թուեցաւ Հեղոմի և նորա կնոջ կամքին,
 վասն զի Թեկզի կուսութեան առթիւ՝ նորա ազ-
 դաբանութիւնն քանի տարուց յետոյ պէտք է վերջ
 ստանար. նոքա ցաւում էին, որ Թեկզի գատողութեան
 առաջը փակիլոյ իրաւունք չունէին, նամնապէս և չու-
 նէին տեղիք համոզանքներով նորա կամքն թուլաց-
 նելոյ, ըստ որում Յերակոյտը վճուել էր Թեկզիին
 ինքնակամ ազատ լինել:

Ժառանգն և Սրաբիոնն գլուխները քարշ
 արած, ականջները սրած՝ լսում էին Թեկզի թա-
 փանցողական հատ հատ խօսքերն: Նոքա ընդունե-
 ցին նորա ասութիւնն՝ ինչպէս երկնային մի սուրբ
 պատգամ, և մտադրուեցան թողուլ աշխարհի անցա-
 ւոր փառքն, և մնացած օրերն ձգնութիւնով անց-
 կացնել: Երկուքն էլ զոհոճակ սրտով հրապարակաւ
 յայտնեցին Թեկզիին իրանց պարզ մտքերն և այ-
 նուհետե իրանց աշխարհային սէրն փոխարինեցին
 Թեկզիի սուրբ սիրոյ հետը, ուխտելով մնալ կոյս մին-
 չև իրանց մահն, և որովհետե Ժառանգի մտադրու-

Թիւնը կարող էր մի վաստ հեռանք յառաջ բերել, Արքայական սերունդի վերջաւորութիւնը մի աննպասակ անբաղաւթիւն էր վերաբերում հպատակ ժողովուրդին. բայց ոչինչ համոզանքներ չունեցան անդէք նրա հաստատուն սիրտը թուլացնելոյ, ընդ հակառակն նա աւելի զօրանում էր, և կամքով ընդունում էր իր վերայ աշխարհի ամէն մի գեղազղ դէպքերն և տառապանքներն, միով բանիւ՝ նա Յիսուսի խաչն ամուր ձեռքով բռնած, յանկարծ անհետացաւ, ոչինչ համարելով երկրաւոր Արքայական ժառանգութիւնը: Թէև նորա ծնողքը դառն արաստունքով սգալի վեճակէ մէջ շուարած՝ երկու տարի ամբողջ մեծ աչաքջութիւնով որոնում էին իրանց ժառանգին ամէն երկրներում, բայց այդ տեսակ աշխատութիւններն Արքայի կողմանէ՛ վերջն սուղարդին եղան, և ոչ մի տեղ չկարողացան նրան գտնել կարծելով՝ ո՞ր գիտէ գազանների կերակուր դարձած: Այնուհետև՝ նոքա յոյսներն իսպառ կտրեցին միտանգամ նորան տեսնելու: Իսկ Արաբիոնն իր վերջին հրաժարականն տալով Վահրամ հօրն, Բրաբիոն եղբօրն, նորա նորապսակ Աիգայն, և համբուրելով Թեկղի ձիւնից սպիտակ ձեռքերն, բարձրացաւ հասարակական գերեզմանատունն, Թեկղի դատարկ գերեզմանի վերայ կանգնացրեց մի արձան, և նորա վերայ գրեց, բառեր ետևիտեաց, կամաւոր ճգնաւորի՝ որդոյն Վահրամայ որանօր կառուցանելով և մի փոկրիկ եկեղեցի՝ սկսեց

իր խտտակրօն ճգնապղեաց կեանքն ճնշել նորանում ձիգ տարիներ:

Վահրամն իր սիրելի Արաբիոն որդոյն Նախախնամութեան յանձնելուցն յետոյ, պատրաստուեցաւ պանդոկոպետի և բոլոր իր թեմի մարդիկների հետը վերադառնալ իր հայրենիքը: Բրաբիոնն և Աիգայն առանձնացած՝ սրտանց զոհուակութիւն էին նուիրում Թեկղիին, և նորա կուսական ձեռքերն համբուրելով աղաւում էին, չհանել մտքիցն նորանց անուններն:— Թեկղին չէ մոռանալ իր սիրելիներին, պատասխանեց նա, գեռ շտա անգամ սէր կվայելէնք միմեանց հետ:

Երբ Թեկղի և նորա ծնողաց առաջնորդութիւնովն Վահրամն իր ամբօխովն ճանապարհորդեց իր երկիրն, Թեկղին բաժանուեց նորանցից և մտաւ քաղաքիցը դուրս փոքրիկ եկեղեցին, ուրանօր նա ստացել էր իր մտքի հանձարն, կանգ առաւ ծրնկների վերայ և սկսեց բանալ մաքուր բերանը և ասել. «Եր Յիսուս, յոյս և մխիթարութիւն այն կարօտ մարդիկներին, որոնք իրանց կենսական պիտոյքները մէկ դի ձգած՝ կ'զառնան քո սուրբ կամքը պաշտելոյ, այժմ ինձ նուիրած քեզ. քո երկրի ամէն մի վայելչութիւնները, փառքը թողած՝ իմ յօժար կամբովն ուխտում եմ Յիսուսից առաջնն՝ մինչև կեանքիս վերջին թեք մնալ հլու քո սուրբ պատուիրաններին, որոնք արդարև միայն կարող են լինել պատճառ մարդոյն՝ ընդունելոյ երկնային հարս-

ճնարանումն անթառամ պսակ, ուրեմն՝ աղաչում եմ,
 արա՛ ինձ զօրաւիզ քոյ սուրբ խաչն, և աւելացրու իմ
 գնութեան տկար ոյժն, հետեւել քո կամքինս: Այս-
 պիսի մի ջերմեռանդ աղօթքից յետ, նա դարձաւ
 իր առանձնական կացարանն, և նոյն օրն ազատեց
 այն սասար զերիններին, որոնք իրանց զերդաստանովն
 եկած էին արդէն Քեկղիին ծառայելու, Ամերիկայի
 հասարակական բանդիցն ազատելու առթիւ, բացի
 մի հարուստ օրիորդից Սէլիմէ անունն, որի ճակատին
 կարծես երևում էր առաքինական բարի գործքեր:

Գերիններն ուրախութեամբ Սէլիմէին յանձնեցին
 Քեկղի իրաւանց տակը և վերադարձան իրանց
 բնակութեան տեղերը, խոստանալով Քեկղիի ամէն մի
 հրահաններն կատարել հարկաւոր դէպքերում:

Սէլիմէն թէև հասակով փոքր էր, բայց Քեկղիի
 առաքինական գործերն շատ շուտով համակրեց իր
 վերայ. նորա կուսական երեսի դժագիրն պարզօրէն
 ցոյց էր տալիս անմեղութեան նշաններ, այնպէս որ,
 ժամանակի հետը խոստանում էր բերել արդարու-
 թեան պտուղներ:

Մի քանի Քեկղիին ամէն գործն կատարեց նպատակին
 համաձայն, իր ձոխ արքայավայել հանդերձը փոխա-
 րինեց հասարակ հագուստի և նիւթական համեղ
 կերակուրները դարձրեց աղքատի, և իր հայրենի
 անակի մէջ շինեց մի առանձին աղօթատեղի, որ-
 տեղ ինքն Սէլիմէի հետն անդադար աղօթք էին նուի-
 րում անմահ Արքային, իրանց մեղքերն թիթեանալոյ

համար, իրանց սրտերի սէրն Յիսուսի ճշմարիտ կամ-
 քին հետը խառնելոյ համար, և վերջին օրն նորա
 յաւիտենական Երկնային հարանարանն մտնելոյ հա-
 մար: Այս երկու մարմնաւոր հրեշտակներն մինչև այն
 աստիճան արդարացրին իրանց տկար անձինքներն,
 որ շատ անգամ յայտնի կտեսնէին Աստուծոյ փառքն,
 Յիսուսի խրատութեամբ իւնն, որով աւելի կը զօրանային
 իրանց կուսակրօնութեան մէջն:

Մարտինն՝ երբ զիշերներն նայում էր իր պա-
 տուհանիցն ցածր քաղաքի վերայ, տեսնում էր, որ
 Քեկղիի և Սէլիմէի աղօթատեղի յարկի վերայ լոյսն
 անխափան պտուտանքներ էր կրկնում, որը ցոյց էր
 տալիս պարզապէս նորանց առաքինական բարի գործ-
 քերն, ուստի և ինքն նախանձով լցուած՝ աւելի ճնշ-
 ւում էր իր անձն խոտակրօն ճգնութեան մէջ, մինչև
 որ հրեշտակներն յայտնապէս նորա աչքին ընտանու-
 պէս էին երևում միշտ: Այս երեք խոտակրօնների ա-
 ռանձին կացարաններն թէև փոքր ինչ հեռու էին
 մէկ մէկուց, այսու ամենայնիւ իրանք անբաժան էին,
 և իրարու մօտ շարունակում էին երթեկուծութիւն, մի-
 միայն դադանի, որ չկէ բամբասանաց ներքոյ են-
 թարկուին, հաստատ յոյսերով մէկ մէկու միտիթա-
 րում էին, և երեքն մի տեղ աղօթելոյ միջոցաւ
 հրեշտակների ձեռքին տեսնում էին իրանց համար
 պատրաստուած Երկնային դարնեայ պսակներն:

Սորանց կացարաններն մտնում էին անարդել և
 քաղաքի քրիստոնէայ ընդ միտիթարվելու համար, և

շատերը տեսնելով նրանց սերտ հաւատն՝ հետեւում էին նորանց օրինակին, արհամարհելով միանգամայն աշխարհիս անցաւոր փառքն, և նորանց աննպատակ պտուղներն: Քաղաքի այլադաւան բնակիչներն՝ երբ զիշերային թանձր մթի մէջ տեսնում էին խստակրօնների յարկի վերայ մշտապէս ձողաձև լուսոյ պտուտանքներն՝ համոզվում էին, և նրանց յորդորանքներովն յանձն էին առնում մկրտուիլ, և Յիսուսին որդեգիր անուանուիլ: Ամէնքը խրախուսվում էին այդ երեք խստակրօնների վրայօք, և կարծես նորանց գաղափարներին ազդում էր մի առաքինական գաղանփք: Միմիայն Արքայն և նորա Արքայուհին ծանր տրտմութիւնով բեռնաւորուած՝ իրանց մի հատիկ զաւակի համար էին մտածում, նորա անդառնալի կորուսան էին ողջում, երանի՜ր, կրկնում էին, եթէ ժառանգն ևս այս խստակրօնների նման առանձնացած իր ճգնութիւնն շարունակէր զոնեայ իր ծնողաց սնուկումն:

Թեկղին տեսնելով նորանց անտանելի կսկիծն ժառանգի կորստեան համար, որոյ զլսաւոր պատճառն ինքն էր միայն, երբեմն մտնելով Արքունի պալատն, փարատում էր նորանց տրտմութիւնն, և քաղցր համոզանքներով նորանց թիւր մտքերն դարձնում էր գէղի անասհման նախախնամութեան կամքը, աւելացնելով, այն Յիսուսն, որի սիրովն բորբոքուած անհետացել է Ձեր զաւակն, կպահէ նորան անվտանգ օմինչև անգամ առիւծների բերանումնս. Ինչպէս մի

բորբոքուած հրդեհի վերայ յորդ ջրոյ սրկելովն կսկսի հուրն շեջանիլ և երկիրն հովանալ, այնպէս և Թեկղիի մխիթարական ազդու խօսքերն նոցա կատաղի սրտերն մեղմացնելով՝ նոցա համբերութեանը ոյժ էր նուիրում, նորանց զայրացած տխուր սրտերուն կսկիծներն դադարեցնում էր: Ժառանգի ծնողքն հետ զհետէ առաքինական գործքերում զօրանալով՝ երբեմն մոռանում էին իրանց անհետացած զաւակին, և Թեկղին ժառանգի անուն տալով՝ նորանով էին մխիթարվում, սրտերի ցաւերն էին փարատում, թող տալով Արքայական ճոխ զարդարանքներն, փառքն և հարստութիւնն, դատաստանի վերջն օրն էին մտածում:

Արքայի այն հոյակապ պալատն, ուրանօր ամէն մի հանդիսաւոր օր ժողովում էին բոլոր պալատականներն, և իրանց ասպետական փայլուն նշաններովն նուիրում էին պալատին մի զարդարանաց շքեղ տեսարան, դեռ ժառանգի անհետանալու օրիցն սկըսած՝ կորցրել էր արդէն իր կանոնաւոր շարունակ ընթացքն, նա արդէն ստացել էր աղքատանոցի ձև, նորանում կերակրվում էր ամէն օր տէրութեան աղքատների դասը, և այգալիսի մի սրբազան գործքի համար՝ արդէն նշանակուած էր Արքունի զանձարանիցն մի նշանաւոր գումար:

Ժառանգի սգալի մայր թագուհին մտքի պտուտանքներովն շուարած՝ Թեկղիի և Մէլիմէի ձեռքերէն բռնած՝ գնում էր շատ անգամ գետակի եզերքն, որն

իր կատարել ալիքներն մէկ մէկու վերայ կուտելով՝
 ահռելի խողովակներով վազում էր քաղաքի մօտովն,
 և օձագտուտ արագութիւնով գնում էր հարաւային
 արդաւանդ գաշտերն ուղղելոյ, և այնտեղ ողբալի
 ձայնը խառնելով գետակի խոխոջմանը հետ, հարցնում
 էր. չունի՞ արդեօք իր զաւակիցն մի որ և իցէ աւե-
 տեաց լուր. խնդրում էր նորա ալիքներէից, որ բերեն
 որդիակորոյս մօրն մի տեղեկութիւն, սրտի հեծե-
 ծանքներով ողբ էր կարդում իր միակ զաւակի վե-
 րայ, և սգալի կերպով զովասանական երգեր հիւ-
 սում ի նուէր այն ժառանգին, որը թագաւորական
 իրաւունքներով պէտք է կառավարէր ընդհանուր
 հպատակ ժողովուրդին, և նորանց կենսական պիտոյք-
 ներն բարւոքելով՝ քաղաքներն պէտք է ծաղկեցնէր:
 Այսպիսի մի աղէտալի տխուր հառաչանքներով նա
 չոքում էր, գետակի ափերն չափում էր, նորա ցաւալի
 դրութիւնն ծածկում էր սեւաների վերմակով շրջա-
 պատ ծաղիկների գեղեցիկ վնջերն, և նորանց խոր
 արմատներն ծծում էին թագուհոյ աշուններէից իջած
 արտասունքներն: Բայց թեկզին և Սէլիմէն մտիթա-
 րական խօսքերով իջեցնում էին որդիազուրկ մօր
 բարձրացած սիրտն, նորա անբուժելի վէրքերն առա-
 քինական սպեղանիքներով փաթաթում էին, և Աս-
 տուածապատգամ քարոզութիւնով խրախուսում էին
 նորան, որոնցով թագուհին արդարև փոքր ինչ փափ-
 կացած թոյլ մարմնով դառնում էր այն տխուր կա-

37073
 1001
 6
 6
 3

ցարանն. որն յառաջ պարծենում էր շքեղ զարդա-
 րանքներով և ականակուռ գահոյքներով:

Արաբիոնն շատ անգամ անձանօթ հագուստով
 աղքատների հետը խառն մտնում էր Արքունի պա-
 լատն, որպէս թէ կերակրուելոյ, և լսողութիւն էր
 ձգում թագուհոյ աղէտալի ողբերգութեան վերայ,
 նորա կակիծներին ցաւակից լինելով՝ աւելի էր ընդար-
 ձակում իր խոնարհ սրտի մէջ արդարութեան ար-
 մատներն, նորա սուրբ հոգին դասակից էր համար-
 փում էութեան փառաբանիչ անմարմին հրեշտակնե-
 րին, և օրէց օր ստանում էր հրեշտակային բնու-
 թիւն:

Արքայի ժառանգն, որին երկար որոնելով զա-
 նազան երկիրներում չկարողացան նորա մասին գո-
 նեայ մի լոկ տեղեկութիւն ձեռք բերել, և այդ իսկ
 առթիւ չէին յուսալ, որ նա կենդանի լինի, դեռ
 անհետանալու օրիցն սկսած՝ պահվում էր ծնողաց
 քաղաքումն, Թեկզի ձեռքովն: Նորա առանձին
 թագստի կացարանն մտնում էին երբեմն Թեկզին և
 Սէլիմէն, որոնց առաքինական գործքերն խրախու-
 սում էին ժառանգի խոնարհ սիրտն, նորանց հոգե-
 տուր ազդու խօսքերն նուիրում էին ժառանգի փափ-
 կիկ զարգացած նուրբ գաղափարին այդ անձուկ կա-
 ցարանի մէջ այնպիսի մի թեթեւութիւն, որ նա բո-
 լորովին չէր զգում այդ անտանելի ձգնագգեաց կիան-
 քըն, միով բանիւ Հոգին սուրբ հովանի էր արել նո-
 րա վերայ իր համարած շնորհքը, մեծ ջերմե-



ուանդութիւնով շարունակում էր նա իր ճշմութիւնն, և օր առօր ամրանում էին նորա սրտումն արդարութեան արմատներն: Սորա կացարանի փոքրիկ պատուհանն նայում էր ուղիղ դէպի դետափն, ուրանօր թագուհին մշտապէս գնում էր իր մի հատիկ զաւակի կորստեան սուգն կատարելոյ: Աստի ժառանգն այդ անձուկ պատուհանիցն երբ լսում էր իր հարազատ ծնողի աղէտալի ձայնն, նորա դառն լալոյ հառաչանքն, և նորա կսկծալի դողդոջիւն գոչիւնն, որ գետակի խոխոջմանը հետ յարմարացրած՝ խնդրում էր նորա բարձրացած աղէքներիցն մի աւետարեր լուր իր զաւակի համար, մորմաքանքների կսկիծն սկսում էր թափանցել նորա աղէքներին մի դալարական պտուտանք, նորա սիրտը ծնողական սիրովն խանձւում էր, նորա փափկասուն կուսական աչուներն պարզ վտակի էին ձեւանում, և վազկան արտասուէքն վտակի նման հոսում էր գետին. նա խնդրում էր Նախախնամութեանը շնորհել իր ծնողացն համբերութիւն, սերմանել նորանց սրտերու մէջն առաքինական արդասիքներ, երջանկայիշատակ դործքեր, որպէս զն՝ անմահարար քաղցր սեղանիցն ունենան բաժին անաչառ դատաստանի օրն: Նա շատ անգամ Սրբբիտի պէս աղքատների խմբին խառնուած՝ մրտնում էր իր սեպհա'յան պալատն, և երբ տեսնում էր իր ծնողի շուարած դրութիւնն, որ բոլորին իշխանական պաշտօնի հոգսերն մէկ դիհ ձգած՝ ձեռքերն ծնկնափակ կապած, արտասուէքով լեքը աչքերն



աղքատների վերայ նետած՝ սրտի թառաչանքներով ողբեր էր կարդում, աւելի էր սաստկանում նորա սրտի վէրքերն, բայց մտածում էր, որ ինքն է զլիսաւոր պատճառն իր ծնողաց առաքինական դործքերին, որոնք իրանց փարթամութեան մէջ՝ դեռ չունէին մի որպիսի և իցէ արդարութեան պտուղներ, սրտի ուրախութիւնը ծածկում էր այդ բոլոր վշտերն, և Նախախնամութեան շնորհիւն մխիթարվում էր նորա արդար հոգին, և ոչ ոք չէր ձգում նորա վերայ գէթ մի կարծեաց հայեացք, որովհետեւ նա Նախախնամութեան քօղովն դեռ ծածկուած էր, մանաւանդ չէին հաւատում, որ նա կենդանի կլնէր մինչև հիմայ, վասն զի տասներկու տարին անցել էր արդէն: Երբ նա աղքատների հետ պալատիցն սկսում էր դուրս գալ՝ աչքերն ձգում էր նորա շքեղակերտ շինուածոց վերայ և ասում էր. «Բնն կորիք, մարդախափ պալատ, զիմ Հայրենեացս աճուններին պարտական պալատ, որքանք ճոխ հարստութեանդ վերայ յոյս կապելով՝ յաւիտեան կորան, հեռացիր աչքիցս, դու ինձ չես պատկանում: Այսպիսի ատողական անդուր խօսքերով՝ հաւատոյ զաւազանն ամուր ձեռքով բռնած՝ դառնում էր նա իր թագստի խաղաղ կացարանն, որն արդարև գերազանցում էր սրբաշամոխ հոյակապ պալատներիցն աւելի և աւելի:

Արքայի կեանքի օրերն նուազել էին, նորա կենսական ուժն դադարում էր ստացել արդէն, և յաւիտենական թանձր քունն հրաւիրում էր կենսափո-

խել գէպի վերնային հարմարանն, որտեղ նա իր բա-
 լի գաւակի ձգնութեան շնորհին պատրաստել էր
 հանգստեան տեղի, բայց տարակուսութիւնն աննպա-
 տակ պայմաններով նորա արքայական սրտին պատ-
 ճառում էր մի գլխաւոր հետեանք, փասն զի նորա
 մահաց յետոյ պէտք է մահու ենթարկուէր և ազ-
 ցաբանական շարունակ թագաւորութիւնն, ըստ որում
 բացի անհետացած միակ ժառանգիցն չունէր նա բու-
 լորովին մի մերձաւոր ցեղ, որ յաջորդէր Արքային,
 և նորա երկարատե թագաւորութիւնն պահպանէր
 գոնեայ մի թել վերայ: Քէն նա հոգոյ շնորհի ազգ-
 մամբն արդէն զգում էր երկրաւոր թագաւորութեան
 ունայնութիւնն, նորա առօրեայ փառքերն, որոնք ար-
 քարե հրապուրողական ձօն զարդերով մարդին եր-
 բեմն ձեւացնում են անմահ, փակելով միանգամայն
 նորա ներքին նկատողական աչքերն, բայց բնածին
 ազահութիւնն ձգտողական սպարդին արգասիներով
 ստիպում էր, որ քարձեալ իր ժառանգաւոր թագա-
 ւորութեան վերայ հոգս ունենայ, որպէս զի նա
 ստանայ քարձեալ իր յարատե շարունակութիւնն: Այդ
 առթիւ Արքայն դեռ իր ճերութեան ժամանակին
 կարգեց Քեկղին իր տեղակ կառաւարիչ՝ վարելոյ
 կողմնակի կերպով Արքային վերաբերելի պաշտոնա-
 կան սարտքերն, որպէս զի ճերութեան կազի կազ
 ընթացքն իսպառ չդադարի, իսկ ինքն սթափուած
 փոքր ինչ կառավարչական ծանր գործքերից, սկսեց

ստիպումի գլխաւոր մտայ գոնեայ մայամով:

այնուհետեւ իր հոգեկան հաշիւներն համարել և նո-
 րա բարեգործութեան թիւն աւելացնել:
 Քեկղին երբ ընդունեց իր վերայ այդպիսի մի
 յանձնարարական իշխանութիւն, սկսեց քաղաքի աղ-
 քատանոցն ընդարձակել, Արքունական տարիներով
 փակուած լի շտեմարաններն բանալ, և նորա գան-
 ձարանի անթուելի հարստութեան մի կողմն թու-
 լացնել: Նա այդ վարձն չէր վերագրում իրան, վասն
 զի այդ հարստութիւնն ժողովրդական էր, և ոչ Ար-
 քայի վերայ՝ մինչդեռ նորա քրանավաստակ արգասի-
 ներիցն այդ հարստութեան հետք չէր խառը գոնեայ
 մի դենարաչափ ալ ժէք: Ընչպէս մարդկային մարմինն
 անձուկ դերեզմանի ծոցը կնքելով՝ նորա թաղման վեր-
 ջին կարգը կատարելու միջոցաւ, յիշեցնում է Սուրբ
 գիրքն ասելով. «հող էիր և 'ի հող դարձցիս», այնպէս
 և Քեկղին Արքունի պալատումն գիղուած հարստու-
 թիւնն բաժանելով ժողովրդոց աղքատ դասի վերայ՝
 ասում էր. «ժողովրդական ես՝ և 'ի նոյն դարձցիս».
 վասն զի այդ անթուելի դանձուց կուտակ շեղջերն
 ժողովրդի քրանավաստակ աշխատանքիցն էին մէկ
 մէկու վերայ գիղուել: Սրանով ժողովուրդը ստանալով
 կենսական ոյժ, անային բարւոքութիւն, Քեկղի բա-
 րեհոգութեան համար ամէնքի բերանից մաղթողա-
 կան նուէրքներ էին բարձրանում գէպի նրկինքն, և
 վերին նախախնամութիւնն՝ ուրախութիւնով ընդու-
 նում էր իր փառաց յարկի տակ այդ խնկանուէր
 բարեգործութիւններն՝ Քեկղին վերաբերեալ:

Քեկզկի այդպիսի շուայլ ծախքերի վերայ Արքայն շատ անգամ ուշադրութիւն էր դարձնում, և նորա բնական ազահութիւնն ցոյց էր տալիս մի տհաճ իրողութիւն, բայց դիմացի պատասխանն ներգործական էր, նորա Արքայական պինդ կամքն նոյն վայրկենումն թուլանում էր, երբ Քեկզկի բերանիցն լսում էր հետեւեալ խօսքերն: «Եթէ դու ցանկանում ես երբ և իցէ քո զաւակի երեսն կրկին տեսնելու, «հարկադրուած պէտք է այս տեսակ բարեգործ կաշտաներով քաղցրացնես Նախախնամութեան կամքն, որին արդարև կարօտ է Նա, և սպասում է ամէն «ժամանակ»:

Երբ նոքա լսում էին իրանց քաղցր ժառանգի անունն՝ սրտի հառաչանքներով բարձրացնում էին իրանց ողբալի ձայներն ասելով— «յուսալն՞ է արդեօք ամիւս անգամ տեսնել նորան, գրկել և համբուրել ծնողական քաղցր զգուանօք»:

— Ամէն անհնարինքն Աստուծոյ առջև հնարաւորք են, պատասխանում էր Քեկզկն: Սրանով նոքա համոզվում էին, նորանց ճմլիկ սրտերն հետ զհետե գօրանում, և Քեկզկի խօսքերն մեծ ներգործութիւն էին ունենում, որովհետև նորան համարում էին ինչպէս մարգարէ:

Ժառանգի անհետանալու տասն և ութը տարին անց էր, երբ Քեկզկն նշմարեց, որ Արքայի և նորա ամուսին թագուհոյ սրտերի մէջն արգարութեան արմատներն մինչև այն աստիճան էին ամ-

րացած, որ անցաւոր կեանքի փառքն, վայելչութիւնն ոչ մի կերպ տեղիք չ'ունէին նորանց գաղափարն թիւրեղոյ, թող թէ իրանց կենսական պիտոյքների պատրաստութիւնը տեսած, հանդիստ մահու գրօշակի տակ պէտք է ննջէին յաւիտեան, ուստի իր սովորական քաղցր զրուցների հետ խառը՝ մի կրճատ բառով՝ որպէս թէ՛ աւետեաց լուր էր ուզում հաղորդել նորանց բթացած լսելքներին ժառանգի վրայօք: Այդ կիսահնչուն հագագն Քեկզկի մարգարէական բերանիցն լսելուն պէս՝ իսկոյն ծագեց նորանց խանգարուած գաղափարին մի ուրախական մտք. ազաչում էին Քեկզկին պարզել այդ գաղտնիքը: — «Երևակայութիւնս, ասաց Քեկզկն, կարծես յիշում է, որ «Ձեր սիրելի զաւակն, իսկ իմն անարատ փեսայացուն կենդանի գառնում է դէպի մեզ»:

Եթէ մի զաւակ, որքան և ապերախտ, մի որ ծնողաց գրկիցն հեռանալով, այն տունն կկորցնի ամէնօրեայ ուրախ գրութիւնն, և տան գերդաստունը թուխպ ամպերի նման կմթնանայ, ապա որքան դառն կակիճներ զիզուած էին մէկ մէկու վերայ Արքայի և նորա թագուհոյ տխուր սրտերի մէջը, երբ նոքա երկար տարիներով կորցրել էին իւանց մի հատիկ խելացի զաւակն, մանաւանդ այնպիսի զաւակ, որն պէտք է Արքայական իրաւամբ թագաւորէր մի ամբողջ աշխարհքի վերայ, և եթէ մի օրեայ ծնողաց գրկից հեռացած զաւակն վերադառնալով կուրախացնէ տխուր ծնողաց սրտերն, և գերդաստանի

Թուխայ մթութիւնն կ'անհետացնէ իսպառ, ապա որքան աւելի հրճուանաց պսակները, հրեշտակային խրախճաններն, և Աստուածանուէր ցնցուղները տեղեք կունենան դասաւորուելոյ այնպիսի ճնողաց սրտերի-մէջ, երբ տասնութն տարով անհետացած բարի զաւակն, մի ամբողջ Տէրութեան պետն, կը դառնայ ճնողաց զիրկն, այժ և Նախախնամութիւնն բարի հրեշտակներով կրանայ վերնուսա ուրախութեան փառաց առաքատն, և այնպիսի ճնողների հետք ուրախակից կ'հանդիսանայ: Նրանք թեկզի ձիւնափայլ ձեռքերն բռնած սեղմում էին իրանց կուրծքին. «Մարգարէացիր, թեկզե, կրկնում էին, կտեսնմ'նք արեգեօք մեր վաղուց կարօտացած զաւակն, նորա որդիական շունչն կիջէ՞ արդեօք մեր սրտերի բորբոքուած սկայծերին դադարումն աալոյ: Ահ Նախախնամութեան պէհ անուն, բացականչում էին ողբալի ձայնով, ստուր մեզ մեր զաւակին մի անգամ զրկել, և այնուհետե մեր կարօտ աչքերն մահուան քնովն փակելը:

Ժառանգի ճգնազգեսց տարիներն լուումն էին ստացել արդէն, նորա արդարութեան սիննաձև շղերն բարձրանում էր դէպի վեր, և խնկելի անուշահոտութիւնով զմայլեցնում էին անմարմին հրեշտակներին, ուստի Նախախնամութիւնք հրաւիրում էր նորան՝ իր ճնողաց բարի սրտերն մտիթարել մի կարճ միջոցում: Այդ առթիւ նա թեկզի հմտութիւնովն հագաւ իր նախկին ժառանգական ճոխ հագուստն,

որը դեռ պահպանում էր իր անձուկ տնակումն, և յառաջ գնալով քաղաքիցն դուրս՝ մտաւ այն փոքրիկ եկեղեցին, ուրանօր թեկզին ստացել էր իր մաքի հանձարն: Իսկ Սէլիմէն մի կերպ բարձրեց ժողովրդի մէջ աւետեաց ձայն ժառանգի վերագառնալու համար: Այդ փափագելի լուրն երբ դիպաւ և Սրաբիոնի լսելէքներին, իսկոյն իջաւ բարձրադիտակ ճգնազգեսց տեղեցն թեկզի մօտ ճշմարիտն իմանալոյ, և երբ լսեց նա թեկզի տարասիւնի պատմութիւնն ժառանգի վրայօք, որ նա՛ Սենեքերիմ ժառանգն՝ տասնութը տարի ամբողջ իր թագաւոր ճրգնու թիւնն շարունակելով ճնողաց դրան առջև, երեւան չի հանել իրան և ոչ մէկին, զարմացական շփոթմունքն շուարական տակ ձրեցին Սրաբիոնի աւուղջ մաքերին: Նա իր առաքինի գործքերն, որոնց վերայ դրել էր հաստատ յոյս՝ բոլորովին մոռացաւ, և երբեմն դարձնում էր թեկզի վերայ մի անբաւական հայեացք, որ մին և այսօր այդ գաղանխքն թողել էր նորանից քօլարկուած:

Ժողովրդական ձայնն հետ գհետէ սաստկանում էր, և ամէն տեղ քարոզվում էր ժառանգի յայտնի գան, Արքայն և թագուհին սրտի ուրախութիւնով լլուած՝ երբ պատրաստվում էին վազել թեկզի կացարանն, թեկզին Սէլիմէի և Սրաբիոնի հետք մտան այդ միջոցին պալատն, աւետիք կարգացին երջանիկ ճնողներին այդպիսի մի հազուադիւս կորստի երևման համար: Արքայն երկրորդ անգամն էր, որ տեսնում

էր Սրաբիոնի երեսն, վասն զի՝ Նա Ժառանգի ցաւե-
րովն մոլորուած՝ Սրաբիոնին մոռացել էր, այդ առ-
թիւ ներողութիւն էր խնդրում նորանից, և երբ ու-
զում էին պալատիցն դուրս գնալ Ժառանգի յառաջ՝
Արքունի ընդարձակ դահլիճումն գումարուեցան բոլոր
պալատական ասպետականներն, որոնց շքեղուն հա-
գուսաներն և փայլիլուն ասպետներն յիշեցնում էին
պալատի տխուր անկիւններին իր առաջ ունեցած
շքեղ տեսարաններն: Գումարտակ ամբոխի բազմու-
թիւնն ձեւակերպում էր այդ վայրկենումն մի յաղ-
թանակ բանակի: Արքայն և Թաղուհին Թեկղեին
Սէլիմէին և Սրաբիոնին մէջ առած՝ պալատականների
հետք միասին ամբոխին երկու մասն բաժանելով՝ յա-
ռաջ խաղացին պալատիցն դուրս: Ժառանգը տես-
նելով ամբոխի յառաջ ընթացքն՝ սկսեց իր քայ-
լերն աւելացնել դիմացի կողմից, նորա ծնողքն ա-
սում էին. «գնում ենք մեր անուշ զաւակին դրկելու,
ճնորա տասն և ութը տարուայ կարօտ սէրն վայե-
լելոյ.» և երբ նշմարեցին իրանց զաւակի իսկական
նմանութիւնն, որ արագ քայլերով շտապում էր ծնո-
ղաց հովանի թեքիւրի տակը ծածկուելը ծունկ ա-
ռան կիսաձանապարհին ծնողական գութերով և գո-
հունակ սրտերով, օրհնում էին Նախախնամութեան
վեհ անունն, որ խղճալով իր ձեռագործների անտա-
նելի տառապանքներին՝ վերջումն կուզէր մխիթարել
նորանց սուսերախոց սրտերն:

Աթէ մի մարդ, որքան և անզգայ, կկորցնի իր

սեպհականութիւնիցն մի որ և իցէ, չնչին իր, որին եր-
կար որոնելով երբ բոլոր աշխատութիւնն ապարդիւն
կերևնայ, և թիւր մոգերով յաւիտեան կտանջէ ի-
րանը՝ մի աննշան կորուստի համար, ապա որքան
անտանելի կսկիծներ, անթուելի տառապանքներ, և
հաղարարի մի մաքեր գիգուած էին արդէն տիեզե-
րակալ Արքայի և Թագուհոյ քայքայուած սրտերի
միջին, վասն զի՝ սորանց կորուստն չէր վերաբերում
մի որպիսի և իցէ, դիցուք թէ, կարի թանգազին իրե-
ղինի, և երբ առաջինն կգտնի իր չընչին կորուստն,
և ձեռքի միջին ամուր պահած՝ հոգոյ զգացմունքով
կսկսի ուրախանալ, և սրտի տարախուսութիւններն
փարատել, ապա որքան աւելի հրեշտակական ուրա-
խութիւններ կներդործէին վերջինների սրտերին, երբ
նորքա գտնելու վերայ էին իրանց մի հաստիկ այնպիսի
կորուստն, որոյ առթիւ Թաղաւորութիւնն մահուան
յեռին թռչակին մօտեցած կերևնար, նորա հարա-
զատ հպատակներն օտարի ձեռքին պէտք է նայէին:
Այո, Ժառանգն ծածկուեց ծնուցայ խնամարկու հա-
վանի թեքերի տակը, և ծնողքը ընդարձակելով
իրանց կրծքերն՝ յափշտակեցին այն քաղցր զաւա-
կին, որոյ անհետանալոյ առթիւ՝ երկար տարիներ
բով երկաթեայ սուր բեւեռներն շարահիւսուած էին
նորանց Արքայական սրտերի մէջն:

... և կիցն ամ ցից
... ասպիտ ասպիտ միտակն զամբ փոխակցուց զի՝ ամ
... ասպիտ միտակն զամբ փոխակցուց զի՝ ամ
... ամ փոխակցուց զամբ փոխակցուց զի՝ ամ

Թ Ե Կ Ղ Ի

ՔԱԺԱՆՈՒՄՆ ԶՈՐՐՈՐԻ

Պարուն էր, երկրի ալեոր սպիտակութիւնն արդէն անհետացել էր և գունատ դաշտերն պատրաստվում էին հագնելու ընտելեան կանաչ զգեստներն, երբ Վահրամն իր խնամի Պանդոկապետի, և թեմական ամբօխի հետն, մեկնուեց Ներոմի քաղաքիցն դէպի իւր նպատակն, իւր քաղըր Հայրենիքն: Վահրամն երբ միաքն ձգտում էր դէպի իր կրտսեր Արաբիոն որդին՝ ծնողական սիրտն սկսում էր թաղկանալ և գալարել, վասն զի՝ նա այնուհետև չէր պատկանում Վահրամին: Բայց Բրաբիոնի և իր հարս Լիզայի փաղաքշական մխիթարութիւնն հալածում էր հետի նորա սրտի ցաւերը, և խափան էր տալիս միանգամայն նորա սրտածմբիկ տխրութեանը: Այդ առթիւ նա մերթ տրտում և մերթ ուրախ՝ մի միջոցից յետ՝ իր սիրելիների հետը միասին՝ հասաւ անվնաս Պանդոկապետի քաղաքն, ուրանօր Լիզայի հարսանեաց կրկնահանգէն ամենափոռտօ որ կերպիս կա-

տարելուցն զկնի, սրտի ուրախութիւնով նաւեցին ծովային ուղղադճովն Վահրամի հանգիստ հայրենիքն:

Լիզայն, որին անչափ էր սիրում Բրաբիոնն, մի տարուց յետոյ ընծայեց Վահրամի տոհմական սեռին մի այնպիսի որդի, որոյ ծննդեան սքանչելիքը զարմացրեց բոլորին, վասն զի մանուկի փափուկ ձեռքերումն տեսնվում էր տիգի և վահանի ձևակերպ գործիքներ, իսկ կուրծքի վերայ խաչաձև նշան, որոնք դուշակուճ էին մանկանն մի իշխանութիւն և ամենավսեմ փառք: Մանկան արտաքին նմանութիւնն մինչև այն աստիճան համապատասխան էր Արքայի անհետացած Սենեքերիմ ժառանգին, որ Վահրամն առանց մի որոշ մտածմունքի՝ կնքեց նորածնելոյ առնունը Սենեքերիմ, որն օր աւուր ստանալով մարմնական յաղթանդամ ոյժ և կարողութիւն՝ ամուճ էր նորանում և մնաց լուսաւորութիւնը: Երևիսայի տասն և հինգ տարին թէև գեռ նոր էր անցնում, այսու ամենայնիւ՝ բնական հանձարն ամէն մի սուր դատողութեանը համապատասխանում էին իր վերայ համակրած սքանչելի նշաններին:

Տէրութեան Պետն, ուրանօր բնակվում էր Վահրամի տոհմականը, լսելով այդպիսի մի պատանեկի շնորհալի համբաւն՝ հրաման հանեց պատանեկին բերել իր մօտ լսածն ստուգելոյ. իշխանական հրամանին հպատակ Վահրամն երբ Սենեքերիմ թողանը շքեղ հագցրած ներկայացրեց Արքային, նորա հեռատես աչքերն՝ մնացին ապուշ այդ տեսակ մի նոր

արարածի վերայ, նա մանաւանդ՝ երբ նա ընկալաւ Սենեքերիմի մանկական շրթունքների համեստ ողջոյնն. իսկոյն նա իջաւ գահոյքիցն ցածր, ընդունեց Սենեքերիմին ինչպէս հաւասարակշիռ իրան մի անձն, և հրաւիրեց նստել փափկակերտ բազկաթոռի վերայ դէմ առ դէմ: Սենեքերիմի ազդու դատողութիւնն ամօթանաց տակ էր ձգոււմ Արքային, որը հինգ տասն տարոյ չափ թագաւորելով մի ամբողջ տէրութեան վերայ՝ այդ տեսակ հանձարի տէր դեռ առաջին անգամն էր որ տեսնոււմ էր, և այն Սենեքերիմի նման մի դեռահաս պատանեկի մէջ:

Արքայն Սենեքերիմի հանձարի և մտքի վերայ միանգամայն շուարած և նորա արտաքին գեղեցկութեան սիրովն սրբուած՝ շտապեց բանալ սենեկի միջնափակ դուռն, ուրանօր ներս վաղեցին թագուհին և Արքայի ն. քանուշ դուստրն: Սոքա, թէև, Սենեքերիմի ողջոյնն սիրով ընկալան, բայց նորա դեռ արտաքին գեղեցկութիւնն այնքան զարմացրեց նորանց, որ բոլորովին մոռացան նորա ողջունի փոխարէնն յետ դարձնելոյ, և մի քանի րոպէ մնացին ոտքի վերայ անշարժ: Սոքա տեղեք ունէին զմայելելոյ նախախնամութեան ձեռքովն զարդարուած այգալիսի մի ջքնաղատիպ պատանեկի վերայ:

Արքայի առաջարկութեամբն իւր ընտանիքը պատիւ համարեցան ունենալ Սենեքերիմի հետն դեռ մասնաւոր ծանօթութիւն, յետոյ նոքա հատընտիր քաղցր խօսակցութեան կապերն՝ այն աստիճան գրա-

ւեց նորանց քնքուշ սրտերն, որ միանգամայն գրաւուեցան նորա սիրովն և խնդրեցին հեռանալ իրանցից: Նքանուշն, որ արդէն իւր օրիորդական զարգացած տարիների մէջն էր, վառուել էր տղայի սիրովն, ուստի նա իր սրտի թագստի առաջաստն բաց արած՝ դասաւորոււմ էր նորանում պատանեկի փաղաքշական սէրն, որով և ոգի էր առնոււմ աներևութապէս:

Ինչպէս մի մարդ, հարստութեան կարօտ, բաղձի բերմամբ յանկարծ կգտնի մի քաակ, լի ոսկով և թանգագին քարեղէններով, այգալիսի մի անսպառելի յաջող դիպուածքի վերայ երկար կմնայ ապուշ այնպէս էին և արքունի ընտանիքն Սենեքերիմի վրայօք, որոյ բանական զանձարանի ոսկոյ փայլն նուիրոււմ էր արքունի ձոխ սենեկի բնութեան զարդ: Սոքա չըթողին իրանցից հեռանալու: Արքայն ինքն էլ իւր մօտ ընդունելով Վահրամին, երանի էր տալիս նրան Սենեքերիմի նման դեռ տասն և հինգ տարեկան հասակումն այնպիսի մի թոռն ունենալու համար, որի հանձարին համապատասխանէ Տէրութեան կառավարութիւնն և նորա զօրքի վարչութիւնն:

Այնուհետև Սենեքերիմին անբաժան էր համարոււմ Արքայն իր ընտանեաց մասնակցութիւնն, նա նորան աստիճանական ասպետներով պահելուցն յետ յանձնեց և նախարարութեան վսեմ պաշտօնը: Սենեքերիմը կարճ միջոցում կարգի բերեց Տէրութեան ամէն մի գործերն, այնպէս, որ երեք տարուայ ըն-

Թացքում՝ լուսաւորութիւնն սկսեց տարածել իր ցո-
ղուն շառաւիղներն ամէն մի քաղաքում բնակուած
հպատակ ժողովուրդոց վերայ:

Մինչդեռ Արքայն և Փագուհին անհամբեր մտա-
ծողութեան տակը ձնշում էին իրանցը՝ Սենքերիմին
փեսայական հրաւեր կարգալոյ քաղցր Շքանուշին
հետը, յանկարծ ստացուեցաւ հրովարտակ նորանց
այն բարեկամ Արքայիցն, որն տասն և ութն տարով
անհետացած միակ ժառանգին արդէն գտնելով՝ հրա-
ւերում էր շնորհ ունենալ ժառանգի յայտ գալոյ
հանդէսն կատարելոյ:

Եւ ի տեսակ մի անսպասելի ուրախութեան
համբաւն մեծ ներգործութիւն թափանցեց նորանց
արքայական սրտերին:

Վահրամն, որին ժառանգի անհետանալու պատ-
ճառն յայտնի էր պարզօրէն, այդ սրտաշարժ լուրն
լսելուն պէս, ներկայացաւ Արքային, և պատմեց նո-
րան ժառանգի պատմական անցքը. յիշելով և իր
սիրելի Սրաբիոն որդոյ ձգնութիւնն, այդ առթիւ՝
նա ցանկացաւ և ինքն Բրաբիոնի, Լիզայի և Սենե-
քերիմի հետը ձանապարհորդելը նախ՝ Սրաբիոնին
այցելութիւն անելոյ, և երկրորդ՝ ժառանգի յայտ
գալոյ հանդիսին ներկայ լինելոյ, ուստի ձանապարհի
ամէն մի պատրաստութիւնն հոգալուցն զինի՝ Արքայի
և նորա բնասանեաց հետը միասին, նաւեցին Արքունի
նաւակով յառաջ:

Մարդս, որ նախախնամութեան շնորհիւն զար-

գարուած է բնական զգայուն մտքով, թէև շատ ան-
գամ աշխարհի վայելչութեան վերայ յոյս դնելով, և
նորա անցաւոր փառքին խաբուելով, երբեմն մոռա-
ցութեան տակ է ձգում Վերին տեսչութեան հովանի
խնամքն, նորա անչափ երախտիքն, բայց անյաջող
դէպքերն շուտով սթափում են նորա պատրուած
միտքն աշխարհային պաշարմունքից, և այդ պատճա-
ռով՝ նախախնամութիւնն իր քաղցր հայեացքն կրկին
դարձնում է դէպի նորան, որով խրատուած մարդն
սկսում է այնուհետև պահել իր մարմնականն և հո-
գեկանը միակշիւ: Ճիշդ այսպէս և որդիակորոյս Ար-
քայն խրատական օրինակներում կրթուած՝ երկար
տարի կսկիծներով բեռնաւորուած՝ իր հարազատ
ծաղիկ զաւակիցն զըկուած՝ այսօր իր նորագիւտ որ-
դուն ծնողական կուրծքին սեղմած՝ մտաց ձգտողու-
թիւնն խառնել էր արդէն նախախնամութեան կամ-
քի հետը, նորա խաղցր խնամքովն էր առաւելապէս
շատանում, որ անյոյս տեղեց յուսալի աղբիւր բղխեց-
րեց նորա ծարան լցնելոյ, ուստի այդպիսի մի գե-
րահոծակ հանդիսակատարութեան համար՝ հեռաւոր
Տէրութեան Արքունի պալատականքն արդէն մէկ մէկի
յետեանց մտնում էին նորա երեկեան տխուր Պա-
լատն, որոնց թւումն էին և Շքանուշի ծնողքն, և
Վահրամեանքն:

Այն սոհմական տներն, որոնք տասն և ութն տա-
րի յառաջ ժառանգի անհետանալոյն առթիւ յալթ-
ուած զօրքի նման սրտերն կոտրուած՝ վերադար-

ձեւ էին իւրաքանչիւրն իր հայրենիքն, այսօր համոզվում էին, որ ամէն մի անյաջող դէպքի հանդէպը արդարեւ պատրաստ է և Նախախնամութեան անհուն բարիքը, օրհնում էին նորա վեհ անունն, որ որդիակորոյս ծնողաց վերաւորուած սրտերն բժշկական սպեղանիքներով կրկին բարեհաճեցաւ նորոգել, և նորանց սրտերումն դիզուած խոցերի տեղն՝ արգաւանդեց ուրախութեան արգասիներ: Ամէնքն մէջ առած Արքային և թագուհուն՝ ուրախական աւտիքներ էին կրկնում նորանց վաղուց թարշամած սրտերին:

Եթէ մի մարդ, մի քանի տարիներով՝ օտար երկրներում թափառելով՝ փոքր ՚ի շատ կենսական սնունդ ձեռք կբերէ, և ապա իր տունն վերադառնալուն պէս՝ կժողովին նորա չորեք կողմն դրայիք և բարեկամներն, նորա տխուր ընտանեաց հետը ուրախակից լինելոյ, ապա որքան աւելի ուրախութեան արժանի կլինեն այն ծնողքն, երբ իրանց մի հասակ ծաղկեց զաւակն, որին չեն կարծիլ մինչև անգամ կենդանի, յանկարծ մի գեղեցիկ ծաղկեայ փունջ կազմած՝ ինքն իրան կ'ընծայի յետին հազադին մէջ գտնուած ծնողացն: Այո՛, այնպիսի ծնողքն՝ է թէ միայն կհամակրեն իրանց վերայ նախկին ուրախ դուրսնն, այլ և երջանիկ կհամարուեն նոքա հրեշտակաց և մարդկան առջևն, որ Նախախնամութեան քաղցր շնորհին կստանան նպատակի համաձայն կատարումն:

Վահրամեանքներն նախ առաջ տեղի կալան իջեանելոյ Հեղո՛մ Հայկունոյ տանն, ուրանօր ընակվում էին առանձնապէս Թեկղին և Սէլիմէն, որոնք իսկոյն փաթաթուեցան մէկ մէկու և մնացին երկար անբաժան: Վաղեց իր ճգնութեան տեղիցն և Սրաբիանն, ծածկուեցաւ իր հայր Վահրամի ծնողական գրկումն: Բրաբիոնն և Լիլայն Սենեքերիմի ձեռքից բռնած՝ մօտեցան Թեկղիին ասելով. «Թեկղի, քո երախտեաց փոխարէնն ահա ընծայում ենք քեզ մեր մի հասակ առաջին պտուղն: Իսկ Թեկղին, որ արդէն գիտէր Սենեքերիմի ապագայի ամէն մի գուշակութիւններն, ուրախութեամբ ընդունեց այդպիսի մի առատաձեռն ընծան, համբուրեց նորա ճակատն, և օրհնեց անելով. «Թող Նախախնամութիւնն աւելի զօրապնդի քեզ, Սենեքերիմ, քո ապագայ իշխանական զորքերումն, աւելայցնելով՝ և Շքանուշն քեզ հետ ամասինս: Սենեքերիմն, որ Շքանուշի հետն թէև շատ օրեր քաղցր զուցանքի կապերով շարունակում էր իր պարզ կեանքը, բայց ոչ երկդիմի մտքով, այսու ամենայնիւ՝ Թեկղիի վերջին աւելուածքն մտածողութեան տակ ձգեց անմեղ զաւակին: Թեկղին չուզեցաւ այդ քողարկուած միտքն տեսողութիւն ունենայ, չուտով պարզեց, ասելով. «Ճակատագիրն արդէն տնօրինել է, որ դու, Սենեքերիմ, Շքանուշին փեսայ լինիս:»

Ամէնքն զարմանում էին Թեկղիի այդքան սուր հանձարին վերայ, որ նա պեռ Շքանուշի երեսին պարզ

Հնայած, և նորա կողմից մի հարեանցի տեղեկութիւն չունեցած, պարզօրէն խօսում էր Նքանուչի սիրոյ համակրութեան մասին, որոյ մարգարէական հոգին միանգամայն շփոթանքի տակ ձգեց և Սենեքերիմի պարզ դատողութիւնն, այնպէս որ՝ նա նշմարում էր Քեկղի առէն մի շարժողութեան վրայօք երկնաբաշխ շնորհ:

Հեռեւալ օրն՝ Քեկղին Սենեքերիմի ձեռքից բռնած՝ Վահրամեան տոհմականոյն՝ մասն արքունի պալատն, ուրանօր արդէն գումարուել էին մերձաւոր և հեռաւոր կայսերական տոհմականներն, որոնց թւումն էին Նքանուչն և նորա ծնողքն:

Վահրամեանքները պալատ մտնելն գլխաւորապէս ուրախութիւն պատճառեց Նքանուչին, որ մի օր Սենեքերիմի սիրուն երեսն չտեսնելով՝ տխրութեան քողին տակն ծածկուել էր այդ սրտաշարժ ուրախական հանդիսովն:

Քեկղին, որոյ մարգարէական հոգին յայտնի էր բոլոր հանդիսակատարներին, Վահրամի թոռ Սենեքերիմին ներկայացրեց այդ թագաւորագումար ձոխ ժողովարի խմբին, և ասաց. «ասա՛ Զեզ իմն բանական ընծան, որին նուիրում եմ Զեզ ինչպէս մի հօտաւէա ծաղկեայ փունջ. թող Զեր արքայական սրբատերն այս պատանեկի քաղցր զուցանքների միջոցաւ աւելի զուարճանան»: Սենեքերիմի դեռ արտաքին գեղեցկութիւնն, արդարև, թափանցեց արքայական սրտերին մի զբաւոյնական երևոյթ, յետոյ նո-

րա երկբերան համեստ խօսակցութիւնն, որով կուզէր նա արտայայտել նորանց զգայուն սրտերին մի պատշաճական խրատութեանք՝ պատճառեց բոլորին խաղաղական լուծութիւն: Ամէնքը բերանաբաց նայում էին այդ պատանեկի առողջ դատողութեան վերայ, նորա քաղցր խօսակցութեան բառական շարահիւսութիւնն զմայլեցնում էր արքայական բանխմաց սրտերին: Նօքա թող տուած ժառանգի յայտ գալոյ հանդէսն՝ Սենեքերիմի խրատական ճառախօսութիւնովն էին զուարճանում: Նատերն ուզում էին այդպիսի մի Տէրութեան զեկն պահպանող պատանեկին իւրացուցանել, բայց ցաւում էին, որ նա արդէն պատկանուած էր մի ուժեղ տիեզերակալի: Ամէնիցն աւելի փարվում էին նորանով ժառանգի ծնողքն, վասն զի՝ Սենեքերիմի արտաքին նմանութիւնն այնքան համապատասխան էր ժառանգին, որ միմեանցից որոշելն շատ անգամ կրժուարանար մարդ,

Քեկղին՝ Նքանուչի հետն միասին զահլիճի միւս անկիւնումն նստած՝ աւետեաց ձայն էր հնչում նորա վաղուց սիրով բորբոքուած սրտին, երջանիկ էր համարում նորան կանանց սեռի միջին, որ նախանամութեան շնորհիւն զարդարուած Սենեքերիմի նման պատանեկին պէտք է ունենայ իրան փեսայ, որը կրկու է իր իշխանութեան տակն երկու հզօր Տէրութիւն, նորա ձեռքերի նշանների գուշակութիւնովն, իսկ կրծքանշան խաչն հովանի պէտք է լինի նորա արքայական իշխանութեան վերայ:

Ժառանգի ծնողաց սրտերի ամբողջիւնն ցաւի միմեռնջների պատճառաւ արդէն թուլացել էր, այդ առթիւ՝ անսպասելի յանկարծ ուրախութիւն պատճառեց նորանց բարակացած սրտերին և յանկարծ թուլացուցիչ մահառիթ վտանգ, որով՝ նոքա նոյն օրերումն կարդացին իրանց մահուան տխուր կտակն, և արդար հոգիներն աւանդեցին բարի հրեշտակի ձեռքն, որոնց ամէնին յայանի և սուրբ մատուցներն արքայավայել ձոխ պատուով տմփոփուեցան Սրարիոնի ձգնավայր անտրատ հողի ծոցումն:

Այլ արդ աշխարհային սգոյ տխուր հանդէսն կատարելոցն զկնի՝ կայսերական տոհմականներն կուղէին վերագառնալ իւրաքանչիւրն իր սրբազան հայրենիքն, Քեկղին քաղցր համոզմունքով. խափանեց նորանց մտադրութիւնն, ասելով՝ ամինչև ժառանգի և յայտ գալոյ պատճառաւ գումարուած էք արդէն մէկ ատեղ, ուստի պիտոյ է ուշադրութիւն դարձնել և նորա և յետ մնացեալ Տէրութեան վերայ, որպէս զի նորա անհոգ վիճակներն ստանան վերստին նախեղակ բարւոգութիւններն:

Ժառանգն, որի վերայ կզիտէին ամէնքի հայեացքն, առ ՚ի յանձնելոյ նորան կայսերական իրաւունքներն, յառաջ խաղայով բոլորի դէմ՝ կարդաց իր հրաժարականն, վարելոյ արքայական պաշտօն, ասելով. զես իմ ժառանգական իրաւունքներն ուրախ զեմ յանձնելոյ Վահրամի թոռ Սենեքերիմին, որ թէ արտաքին նմանութիւնով, և թէ անուանական կոչ-

ւմունքով, կարող է կրել իր վերայ ինձ վերաբերելի իրաւունքներն:»

Նախախնամութեան վճիւն անդառնալի է և չկայ երբէք այնպիսի մի զօրաւոր առարկայ, որ նորա ուղղութիւնն գէթ մագաչափ շեղել կարողանայ: Ամէնքն ճանաչելով Սենեքերիմին ինչպէս մի արժանաւոր անձն արքայական պաշտօնը վարելոյ, միանուազ բարձրացրին իշխանական ձայներ. արժան է արժան, և բոլորիս հաճելի: Յետոյ հրաւիրեցին Սենեքերիմին ընտրել նախապէս իրանը կողակից թագուհի, թէև այդ վսեմ հանդիսականների իւրաքանչիւրի մտքի մէջ դասաւորում էր մի գաղտնիք, Սենեքերիմին փեսայական հրաւեր կարդալոյ, սակայն զիմացի այդ տեսակ հրաւերներն անկարծիք չէին ունենալ ոչ մի նպատակ, վասն զի նորա աշխոյժ երիտասարդական սրտի մէջն արդէն թագաւորուած էր սիրուն Նքանուշի կուսական սէրն, այդ առթիւ՝ հետեւեալ օրն կատարեցին չքնադների նշանադրութեան և ապա նոցա միակապ ամուսնութեան սուրբ կարգն, որոնց զխաղիր խաչին ձեռնամուկս եղաւ ժառանգն:

Այդ ամէն հանդիսակատարութիւններին վերջ տալուցն զկնի՝ պսակեցին Սենեքերիմին և արքայական պաշտօնիւ, և ապա դարձան իւրաքանչիւրն իւր հայրենիքն, նմանապէս Վահրամն և Նքանուշի ծնողքն: Իսկ Սենեքերիմն կրելով իր վերայ այդ վսեմ փառքն և բարձր իշխանութիւնն, ջանք դրեց բարւոգելոյ Տէրութեան ամէն մի անկանոն ընթացքը, որոյ հմու-

Թիւնովն արդարեւ՝ մի կարճ շրջանում Տէրութեան բոլոր քաղաքներն ծաղկեցան բանական ծաղիկներով և նորանց Թարչամսծ կոկոններն սկսեցին ցոյց տալ իրանց զուարթ Թերթիկներն, իսկ ներքին բարոյական մտքերն՝ զիմացի մարդկանց սրտերն էին շարժում: Այնուհետև Նախախնամութեան քաղցր խնամքը, նորա երկնաբաշխ յաջող զիպուածքն, կարծես, փռել էր իր հովանի Թեքերն այդ մի հռչակաւոր Տէրութեան վերայ. հպատակ ժողովրդոց մէջ շարունակվում էր սիրակապ միութիւն՝ այնպէս, որ նա՝ ժողովուրդն, համակրում էր արդէն իրանում աւետեաց Նրկրի յիսուսապիր պատուէրներն, և ամէնի արժանայիշատակ գործքերն՝ համարեայ Յիսուսի կամքի հետն կապ ունէին. իսկ այլակրօն ազգը՝ տեսնելով գրացիների բարի սրտերն և շատ անգամ Աստուծոյ զարմանալի սքանչելիներն, որ երբեմն բարեպաշտների սրտերն յայտնապէս խրախուսում էին, անսպաս միջոցում դարձել էր արդէն զէպի լոյս հաւատն, պաշտում էր Յիսուսին անսրոշ հաւատով, և սիրում էր նորան ջերմեւանդ սրտով. այդ իսկ առթիւ՝ Նախախնամութեան շնորհիւն այդ բազմամարդ Տէրութիւնն հետ զհետէ ստանում էր ընդարձակութիւն և աճում էր ժողովրդոց Աստուածարօք սրտումն բարեխոյս պտուղներ:

Սենեքերիմն ընդարձակելով իրեն յանձն եղեալ Տէրութիւնն՝ մի միջոցից յետ իր հովանի Թեքերի տակն ձգեց և Նքանուշի ծնողաց Տէրութիւնն, վասն

զի՛ Տէրութիւնն հարկադրում էր վերջիններին ունենալ այնուհետև հանդիստ կեանք:

Վերին Տեսչութիւնն չափու տակ ձգելով Սենեքերիմի և նորա Թագուհոյ Նքանուշի այդպիսի մի գերազանց առաքինի գործքերն, պարզեւել էր նրանց մի ժառանգ Վահան անունով, որոյ իմաստնական ճակատի վերայ փայլում էր և առաքինական հաստատուն դրոշմ: Սա դեռ մանուկ հասակումն զարգանալով բառ մեծի մասին խոնարհ Փեկզիի ակնածու հսկողութեան տակն՝ սեպհականացրել էր արդէն նորա առաքինական բալի գործքերի սկզբնատիպն ընդ նմին և նորա մտաց իմաստնական հանձարն:

Երբ Վահանն իր օրհասական տարիներն կատարելագործեց, ծնողքը կուզէին փեսայացնել նորան և կարգել Նքանուշի հօր տէրութեան վերայ իշխուլ բայց նա հերքում էր և շատ անգամ խափան էր դնում նրանց այդ առարկային վերաբերեալ մտքերին, վասն զի խորամանկ կանանց ներքին գաղտնիքներն նորա աչքի առջևն պատկերացած էին երևում, առաւելագէս՝ երբ կինն դիւցազնական սերունդին էր պատկանում, այդ իսկ առթիւ չէր վստահանում նա մշանել ամուսնութեան ծանր լծոյ տակն:

Ծնողքը թէև խոստանում էին որոնել նորա համար հարսը բարի սերունդից, բայց նորա պատասխանն լինում էր. «Քանի՛ դժուարին է ընտրել ամուսին, որ բարուք և վարուք համապատասխանի իր ամուսնոյ բնութեան կոչմանը, վասն զի վատթար

ընտրութիւնն ինքն ըստ ինքեան կարծումն է կենաց
 և միանգամայն պատճառ մարդոյ անխարձ կորուս-
 տեան. դուք նայելով ծնողաց վարքին՝ կարծում էք
 թէ նոյնը կհամակրէ և նրանց գոնատրն, ո՛չ մոլոր-
 վում էք բոլորովին, զի չեք հնար ստուգելոյ կատա-
 «րեալ հայրն և ո՛չ գաղանի գործքերն խորամանկ»

Այսու ամենայնիւ Վահանն հեռեւաբար օրի-
 նակուելով այն զօրաց բանակին, որ պատերազմա-
 կան դաշտում թշնամու զնդակակոծ վէրքերի կսկիծ-
 ներիցն ստիպուած՝ անձնատուր կհանդիսանայ, ակա-
 մայից հաճեցաւ կատարել իր ծնողաց և նորանց
 նախարարների ցանկութիւնն, այնու միակ պայմանաւ,
 որ ամուսնական ընտրութիւնն կախումն ունենայ մէն
 միայն Վահանի կամօրից:

Վահանն զեռ վաղօրոք դրաւուած լինելով յե-
 տին չքաւոր մի մանկահաս օրիորդի սիրոյն, որը նո-
 րա ապարանի մօտերքումն արածացնում էր իր աղ-
 քատ հայրիկի բարերաւի գառներն, ընտրողական ի-
 րաւունքն սեպհականացնելուցն յետոյ, հաճեցաւ ա-
 մուսնանալ այդ կարի բարեգեղ օրիորդի հետն, յու-
 սալով, որ նորանով միայն կարող է բաղդաւոր առնել
 իրան՝ ընտանեկան կեանքին վերաբերեալ առարկա-
 ներում:

Հարսանեաց պատրաստութիւնն կատարելագործ-
 ուած էր, հրաւիրեալները հետզհետէ յաճախում էին
 հարսնարանն, բայց հարսնացուի յատկութիւնն մնում
 էր անորոշ:

Վ. Ե. Զ.

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Անկեղծօրէն և աւելի քերտ գգացմունքով ար-
 տայայտում եմ իմն սրտանց խորին շնորհակալութիւնն
 հետեւեալ Պարոններին, Հայ Տիկիներին և Օրիորդ-
 ներին, որոնք բարեհաճեցան իրանց եռանդուն սր-
 տերն յարակցել սոյն դոյն — աշխատ գործքին հետը՝
 վճարելով «Ծնողասէր Թեկղի» I և II հատորների
 տպագրական ծախքն:

| ԱՆՈՒԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԳԱՑ | Արժուք. | |
|---|---------|----|
| | Ռ. | Կ. |
| Ե Ր Ե Ի Ա Ն Ի Ց | | |
| Մատթէոս Տէր-Պօղոսեանց կողմէսկի ըն- գիստրաստօր..... | 10 | — |
| Տիկին Նողշող Տէր Պօղոսեանց..... | 10 | — |
| Հայկ Տէր Պօղոսեանց..... | 2 | — |
| Օրիորդ Սէլմէ Տէր Պօղոսեանց..... | 1 | 50 |
| „ Ասանէթ Տէր Վահանեանց..... | 1 | — |
| „ Փեփրոնիա Ալոյեանց..... | 1 | — |
| „ Զարուհի Մէլեանց..... | 1 | — |
| Խաչատուր Տէր Վաղարեանց կողմէսկի սեկրետար..... | 10 | — |
| Մէլայէլ Միանսարեանց աստիճանաւոր... | 1 | — |
| Մէլքոն Մէլքե Թակոբեան աստիճանաւոր | 1 | — |
| Ներսէս Թայրեանց..... | 1 | — |
| Մահտեսի Պօղոս Խաչատրեանց..... | 1 | — |
| Մկրտիչ Վարդանեանց..... | 1 | — |
| Գասպար Վարդանեանց..... | 1 | — |
| Թակոբջան Գէորգեանց..... | 1 | — |

Handwritten signature

| | | |
|---|---|---|
| Գրիգոր Սիմէօնեան Ամիրեանց..... | 1 | — |
| Արամ Գեորգեան Թորոսեանց..... | 1 | — |
| Ալէքսան Բէգ Ապանեանց..... | 1 | — |
| Թադէոս Տէրունեանց..... | 1 | — |
| Գրիգոր Ռէվազեանց..... | 1 | — |
| Բարսեղ Յղիազարեան Սիմէօնեանց..... | 1 | — |
| Աստուածատուր Աստուածատրեանց..... | 1 | — |
| Գրիգոր Բարաղամեանց..... | 1 | — |
| Վարդան վարդապետ՝ Վանահայր Գեղարդայ Վանից..... | 1 | — |
| Պետրոս վարդապետ Այվազեանց..... | 1 | — |
| Ստեփաննոս քահանայ Տէր Յոհաննեանց | 1 | — |
| Բաշգառնի գեղջ..... | 1 | — |

Վ Ա Ղ Ա Ր Շ Ա Պ Ա Տ Ի Յ

| | | |
|--------------------------------------|----|---|
| Յովհաննէս Յակոբեան..... | 10 | — |
| Տիկին Իւղարբր..... | 10 | — |
| Մարիամ դուստր՝ Քալանթարի..... | 5 | — |
| Կարապետ Յակոբեան..... | 4 | — |
| Տիկին Մարիամ..... | 4 | — |
| Օրիորդ Մարգարիտ..... | 3 | — |
| „ Շուշանիկ..... | 3 | — |
| Յակոբ Կարապետեան..... | 2 | — |
| Սիմէօն և Արարիօն Տէր Գրիգորեանց..... | 1 | — |

Ա Շ Տ Ա Ր Ա Կ Ի Յ

| | | |
|-----------------------------------|---|----|
| Իսում Շահազիզեանց Կամնարական..... | 1 | 50 |
| Աղէքսանդր Մակարեան..... | 1 | 50 |
| Խաչատուր Անթանեանց..... | 1 | 50 |
| Օր. Աննա Ալէքսանեան..... | 1 | — |
| Օր. Կալիփէ Շահազիզեանց..... | 1 | — |

| | | |
|---------------------------------|---|----|
| Արշակ Տանուտերեանց..... | 1 | 50 |
| Զանիրէգ Աղուժեանց..... | 1 | 50 |
| Օր. Եփեմիա Դադեանց*..... | 1 | — |
| Յարութիւն Վիրապեանց..... | 1 | — |
| Կարապետ Ղափանցեանց..... | 1 | — |
| Գաբրիէլ Շահազարեանց..... | 1 | — |
| Փոքր Բոյաղչեանց..... | 1 | — |
| Մարտին Սիսակեանց..... | 1 | — |
| Իսահակ Շահազիզեանց..... | 1 | — |
| Սիմէօն Տէր Գալստեանց..... | 1 | — |
| Տիկին Մարիամ Տէր Գալստեանց..... | 1 | — |
| Օրիորդ Անուշ Մէլիքեանց..... | 1 | — |
| Եփրեմ սարկաւազ Սուքիասեանց..... | 1 | — |
| Սեդրակ Ներիգորեանց..... | 1 | — |
| Յարութիւն Աւետեան..... | 1 | — |

Ա Ղ Ա Փ Ա Ր Մ Ի Յ

| | | |
|--|---|---|
| Յակովբ Տէր Մարտիրոսեանց՝ Հասարակութեան Տանուտեր..... | 1 | — |
| Աւազ Յովհաննիսեան Աղստեանց..... | 1 | — |
| Գաբրիէլ Վարդանեանց..... | 1 | — |
| Տիկին Մարիամ Մանուկեանց..... | 1 | — |
| Խաչատուր Առաքելեան Մէլիքեանց..... | 1 | — |
| Յակոբ Քօչարեանց..... | 1 | — |
| Արշակ Շապուհեան Դամբչեանց..... | 1 | — |

Ն Ե Ր Ք Ի Ն Ա Ի Տ Ի Յ

| | | |
|---------------------------------|---|---|
| Անդրէաս Քահանայ Տէր Անդրէասեանց | 2 | — |
| Գրիգոր Տէր Անդրէասեանց..... | 2 | — |
| Նիկողայոս Տէր Անդրէասեանց..... | 1 | — |

*) Նոյնիմ է Իսահակ Շահազիզեանցը

ԳԵՕՁԱԼԻՒՐԻՑ

| | | |
|--------------------------------|---|---|
| Մկրտիչ Տէր Մովսիսեանց..... | 2 | — |
| Տիկին Աննա Տէր Մովսիսեանց..... | 2 | — |
| Արշալոյս Տէր Մովսիսեանց..... | 1 | — |

ՆՈՒԻԻԻՑ

| | | |
|------------------------------------|---|---|
| Գրիգոր Վարդապետ Գառնակերեանց՝ | — | — |
| Յաջորդ Հոգեւոր կառավարութեան..... | 1 | — |
| Կ. Փիրզադեանց՝ Քարտուղար Հոգ. կա- | — | — |
| ռավարութեան..... | 1 | — |
| Գրիգոր Մարգարեան կողմժսկի սեկրետար | 1 | — |
| Աւետիք Տէր Յակոբեանց ուսուցիչ..... | 1 | — |
| Համբարձում Տէր Աւագեանց..... | 1 | — |
| Յակովբ Գլղարեանց..... | 1 | — |
| Դաւիթ Սամուէլեան..... | 1 | — |
| Աղէքսանդր Մակեդոնսկի..... | 1 | — |

ՆՈՐ-ԲԱՅԱԶԻԴԻՑ

| | | |
|-----------------------------------|---|---|
| Федоръ Степановичъ Соколовъ, а- | 3 | — |
| гентъ для Управл. Государст. Им- | — | — |
| пествами..... | 3 | — |
| Նիկողայոս Աստուածատրեան Խորովեանց | 1 | — |
| Սերոբէ Մահտեսի Աֆրիկեանց..... | 1 | — |
| Տիկին Համասփիւռ Մահտեսի Աֆրիկեանց | 1 | — |
| Գէորգ Դայեանց..... | 1 | — |
| Տիկին Յուսիանէ Դայեանց..... | 1 | — |
| Սրբորդ Հեղինէ } Մամիկոնեանց..... | 2 | — |
| „ Շքանուշ } .. | 1 | — |
| „ Շուշանիկ Բունիաթեանց..... | 1 | — |
| Գէորգ Արծրունի..... | 1 | — |

| | | |
|----------------------------------|---|---|
| Սարգիս Փիլոյեանց ուսուցիչ..... | 1 | — |
| Սրաբիոն և Բրաբիոն Փիլոյեանց..... | 1 | — |
| Յովհաննէս Մահտեսի Աֆրիկեանց..... | 1 | — |
| Յովհաննէս Միքայելեան՝ Հասարակու- | — | — |
| թեան Տանուտէր Փաշաքենդոյ..... | 1 | — |
| Սիմէոն Մելիք Աւչեանց Բասարղէարցի | 1 | — |
| ԹԻՖԼԻՍԻՑ | | |
| Սրբորդ Պերճանոյշ Պաօշեանց..... | 2 | — |
| „ Աշխէն Պաօշեանց..... | 1 | — |



Պ. ԳՐԶԻՆ

Պ. Գրիչն «ՓՈՐՁ» հանդիսի միջոցով զբքոյկիս
I հատորն քննադատութեան տակ ձգելուցն յետոյ,
եթէ ներելի է ասել, անխղճաբար՝ իրանը սեփ-
հականացրած վեճմ ախողոսի հակառակ, կարծես
երազելով՝ նկարագրում է հրապարակաւ և մեր կեն-
սագրութիւնն մի այլանդակ ոճով:

Այս մեր հեղինակած զբքոյկի բովանդակու-
թիւնն ըստ մեծի մասին լինելով բանաստեղծական
մի կեղծիք պատմութիւն, մենք համոզվում ենք, որ
նորանում կարունակուին և տեղագրական խոշոր
պակասութիւններ. իսկ որ ինչ կվերաբերի Պ. Գրչի
յարձակմանն մեր պատուոյ դէմ, մենք առ այժմ կպա-
տասխանենք, որ նա իսկապէս կնմանի այն մարմնաւոր
առարկային, որն աշխատում է իր սեպուհ ապաշնորհ
երևոյթն և անախորժ ստուերն ուրիշին պատուաստել:

Գրքոյկի թերութիւններն պարզելոյ աղաղա-
ցոյց ենք տալիս պարոնին մեր սրտանց զոհունակու-
թիւնն, իսկ իւր անձնական պակասութիւններն ուրիշ-
ներին սեփականութիւն տալոյ աղազաւ՝ արժանի է
նախատանայ պատուանշան պսակի:

Խ. Տ. Խաչատրեանց



10100

2013

